

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՅՈՒ «Ի ՅԻՇԱՏԱԿԻ ՍՐԲՈՅՆ ԹԷՈԴՈՐՈՍԻ...»
ՀԱՌԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բաճախիչ. գիտ. դոկտոր Վ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գրիգոր Նյուսացու սույն երկը գիտական բնագրի խորագրում կոչվում է Ներբող (εὐχολογίον)¹: Ժանրային այդ անվանումը նույնությամբ պահպանվել է նաև հայերեն թարգմանության մեջ: Նյութով ու բովանդակությամբ երկը համապատասխանում է ներբողի այն տեսակին, որ մասնագիտական գրականության մեջ ընդունված է կոչել դամբասնական ճառ կամ գերեզմանական խոսք²:

Գրիգոր Նյուսացին կիրառում է ներբողյալի արժանիքների ընդգծման, բացահայտման այլազան ձևեր, տվյալ պարագայում՝ Թեոդորոսի կյանքի ու գործունեության արժանահիշատակ դրվագների վերհանում: Վկայակոչենք դրանցից մեկը. «Բարեպաշտ գոյով եւ հաւատով, որ ի Քրիստոս յամենայնի պարծելով, ոչ միայն ի ճակատի իւրում գրել զխոստովանութիւնն, եւ ոչ տակաւին դեռ ընտիր գոյով արիութեանն, եւ ոչ անհմուտ մարտի եւ պատերազմի, այլ արիագոյն անձամբ զաւրատր լինէր առ վիշտսն զդադարմունս, ոչ թուլակի, ոչ զանգիտելով»³: Նույն նպատակին ծառայող մեկ այլ տարբերակ է հարցման միջոցով մեծավորների, անվիճելի հեղինակության համարում ունեցող անունների հետ համադրության եզր որոնելու եղանակը. «Ո՞վ ոք ի թագաւորացն այսպիսի պատուով պատուեալ լինի: Ո՞վ ոք յայնցանէ, որ գերազանցութեան առ մարդկան երեւեալ, այսպիսի յիշատակաւ փառաւորեալ լինին: Ո՞վ ոք ի զաւրաւորաց ... այսպիսի են երջանիկը, իբրեւ զզինուորս զայս...»⁴:

Արժանիքների ընդգծման յուրահատուկ եղանակ է ունկնդիրների հակվածության, ներբողյալին մոտիկից շփվելու, որեւէ կերպ առնչվելու այլազան դրսևորումների արտացոլումը: Նման դրվագներից մեկում կարդում ենք. «Եթէ ոք երբէք այնպիսի բարի հանդիպմամբ շնորհեսցէ զիշխանութիւնն, որպիսի ինչ բազմափափագ եւ ձիրն ըղձից վերագոյն գտին զայսոսիկ, որ զփորձ են առեալ եւ նոմին ցանկութեամբ զծարաւ լցեալ: Քանզի իբրու զմարմին կենդանի եւ ծաղկեալ զնա տեսողքն համբուրեալ լինին աչաւք, բերանաւք, լսելեաւք, որ յամենայն զգայութիւնսն հասուցանելով...»⁵:

Կերպավորման գործում էական տեղ է հատկացվում գեղարվեստական արտահայտչամիջոցների ողջ համակարգի լիարժեք դրսևորման հնարավորությանը: Գրիգոր Նյուսացու դամբանական ճառում կան ճաշակավոր համեմատությունների բազմաթիվ օրինակներ, հին ու նոր թեմատիկ արտա-

¹ Տե՛ս Gregorii Nysseni Sermones, pars II. Ediderunt Gunterus Hell, Johannes p. Cavarinos, Otto Lendle..., Köln, 1990, p. 61—71 (այսուհետև՝ Sermones), հմտ. Patrologiae cursus completus. Series graeca. t. 46, p. 736—748.

² Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 6196 (Ճառերտիր, 1227 թ.), էջ 311 բ—315 ա՝ Առաջին շարաթի ար աղուհացիցն. ի յիշատակի սրբոյն Թեոդորոսի երանելոյն սրբոյն Գրիգորի Նիսացոց եպիսկոպոսի ներբողեան ասացեալ: Ներբողի ժանրի մասին հանգամանալից քննություն ունի բանասեր Ա. Ղաղինյանը (տե՛ս Հայ միջնադարյան գրականության ժանրեր. Երևան, 1984, էջ 127—178):

³ Նույն տեղում, էջ 313 ա:

⁴ Նույն տեղում, էջ 312 բ:

⁵ Նույն տեղում:

հայտնությունների նպատակադիր կիրառման ուղադրամ դրվագներ, մակդիր-ների հարկավոր առատության ոչ քիչ թվով օրինակներ: Եվ այդ ամենը բծախնդիր հոգացողությամբ ծառայեցվում է Թեոգորոսի կերպարի ամբողջացմանը, նրա շուրջ հյուսվող պատմության համոզիչ ու ավարտուն տեսք ստանալուն:

Հայոց թարգմանական բազմաժանր գրականության կարեորությունը մեզանում վաղուց է արձանագրվել և նոր փաստարկումների անհրաժեշտությունը չկա: Քանի որ այն նախորդել է մեր ինքնուրույն մատենագրությանը, ապա, բնականաբար, գրավոր մշակույթի համեմատաբար հին շերտ է ներկայացնում և իբրև այդպիսին ենթադրում է որոշակի դրական առնչակցություն նոր ձևավորվող ազգային գրականության ժանրային ոլորտներում: Նոր հայկազյան բառարանի կազմողները (այսուհետև՝ ՆՀԲ)՝ ձեռքի տակ ունեցել են Գրիգոր Նյուսացու մեկ տասնյակ անուն գործերի հայերեն թարգմանություններ և օգտվել են դրանցից: Թարգմանական այդ հուշարձանների կարեորության, դրանց բառազանձի ինքնատիպության մասին կարող է որոշակի պատկերացում տալ հետևյալ իրողությունը. մի քանի ժաննակի երկու վկայություններից մեկը, հաճախ հնագույնը, Գրիգոր Նյուսացու գործերից է քաղվում: Առավել արձանագրելի երևույթ է մեկական օրինակներով հայտնի բառարացատրությունների խնդիրը. ՆՀԲ միայն Ա տառի օրինակների մի մասի համեմատությամբ ցույց է տալիս, որ շուրջ երեք տասնյակ եզակի կիրառությամբ հին հայերեն բառեր կան, որոնք ավանդվել են բյուզանդական մատենագրի բացառապես «Յաղագս Երզնայի», «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն», «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» և «Վարք երանելոյն Գրիգորի Սքանչելագործի» երկերի հայերեն թարգմանությամբ: Այդպիսիք են. անկատարելապէս, անկարարար, անկողմանումն, անկուած, անհաստ, անհաւատարելի, անհաւատարիմ առնել, անմեծութիւն, անուանական, անուժագործ, անպնդաբար, անցանակ, ապրասամ (ապրասադ), աղանդական, աղջանջ, ամենախահութիւն, ամենապտղութիւն, ամուսնաբար, այսրանդրաբերութիւն, այրապատկեր, անգիտակութիւն, անգործագոյն, անգունութիւն, անդրաբերութիւն, անդրոյթք, աներկշտութիւն, անգմտաւածելի, տնժողով, անկամաւեր և այլն:

Ամենէին շխորհանալով թվարկված բառերի՝ հունարեն նախօրինակների հետ ունեցած բառակազմական առնչակցությունների խնդիրների մեջ, պիտի արձանագրել, որ դրանք առաջացել են թարգմանական հոդի վրէ, Գրիգոր Նյուսացու ճառերի թարգմանիչների ձեռքով ու հունարեն նախօրինակների ակնհայտ նմանությամբ:

Այսպիսով, «Ի յիշատակի սրբոյն Թեոգորոսի...» հատմանակաւ ճառի հայերեն թարգմանությունը որոշակի հետաքրքրություն կարող է ներկայացնել բառազանձի ինքնատիպության իմաստով: Նշված հուշարձանում ևս կան թարգմանության ճանապարհով առաջացած բառեր և արտահայտություններ, բառակապակցությունների նոր ու ինքնատիպ ձևեր: Պիտի նկատել, որ այս կարգի ընթերցումների առատությունն առաջին հերթին պայմանավորված է բնագրին բառացի հետեւելու, հունարեն բառերն ու բառակապակցությունները նույն երանգով հայերենի փոխանցելու թարգմանչի ցանկությամբ:

Համեմատությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում հայերենի թարգմանիչը իրոք կարող էր բնագրի այս կամ այն բառ-տերմինի համար ընտրել համեմատաբար պարզ, այլուր վկայված տարբերակ: Բայց քիչ չեն նաև այն օրինակները, երբ ներքոդի թարգմանիչը այդպես չի վարվել: Նման դեպքերում, չնչին բացառությամբ, հունարեն բնագրի համապատասխան բառը, հաճախ նաև արտահայտությունը, սակավ գործածա-

կան է նաև հունարենում (օրինակ՝ $\pi\omicron\lambda\upsilon\pi\acute{\epsilon}\theta\gamma\tau\omicron\varsigma^9$, $\psi\omicron\gamma\tau\omicron\sigma\phi\omicron\nu\gamma$, $\gamma\lambda\omega\tau\tau\omicron\sigma\phi\omicron\rho\omicron\varsigma^8$, $\nu\epsilon\theta\lambda\epsilon\chi\tau\omicron\varsigma^9$ և նման մի շարք բառեր)։ Պարզվում է, որ կարևոր դեր պիտի վերապահել հունարեն նախօրինակի լեզվի բարդությանը, նեղիմաստ պատմափիլիսոփայական տերմինների առատությանը, այն փաստին, որ կան բառեր, որոնք թերևս եզակի վկայվածության կամ, չի բացատրվում, դժվար բացատրելիության պատճառով լիովին հասու չեն եղել թարգմանչին։

Ե՛ր յիշատակի սրբոյն Թէոդորոսի...» երկի հայերեն թարգմանության տեքստում բառազանձի իմաստով ուշադրության արժանի օրինակները կարելի է բաժանել մի քանի խմբի։

Բառեր, որոնք անժանոթ են ՆՀԲ-ին, այլուր ավանդված չեն, ուստի և բացատրելի են սույն ճառում պահպանված եզակի կիրառությամբ։

ա) «Անյեղանակ եւ մարդասիրաբար տրամաբանելով»¹⁰ (էջ 313բ) արտահայտությունը թարգմանություն է հունարեն $\epsilon\upsilon\lambda\omicron\gamma\epsilon\beta\lambda\epsilon\gamma\theta\eta\tau\alpha\nu$ $\tau\rho\omicron\tau\omicron\nu$ $\kappa\alpha\iota$ $\epsilon\lambda\epsilon\gamma\theta\rho\omega\tau\omicron\varsigma$ $\delta\iota\alpha\lambda\epsilon\gamma\omicron\mu\epsilon\nu\omicron\iota$ ¹¹ կապակցության։ Համեմատությունից պարզվում է, որ անյեղանակ բառն առաջացել է բնագրի $\alpha\upsilon\tau\epsilon\beta\lambda\epsilon\gamma\theta\eta\tau\alpha\nu$ $\tau\rho\omicron\tau\omicron\nu$ կապակցությունը թարգմանելու եղանակով և պետք է հասկանալ անօրինակ, անձև, անճամբնատ, անզուգական իմաստով, որ հաստատվում է և համապատասխան հատվածի բովանդակությամբ։

բ) «Այսպիսի արուեստասիրութեամբս սխրացոյց զաշս»¹² մտքի հունարեն համապատասխանությունում ասված է. $\alpha\upsilon\tau\omega$ $\epsilon\iota$ $\sigma\tau\epsilon\gamma\chi\mu\epsilon\tau\iota\nu$ $\epsilon\nu\epsilon\nu\pi\alpha\theta\eta\tau\alpha\varsigma$ $\tau\eta\gamma$ $\theta\psi\iota\gamma$ ¹³։ ՆՀԲ-ն «սխրացողոյսնեմ» բառի տակ վկայակոչում է այլ նույն միտքը և միաժամանակ արուեստասիրութեամբս բառը ընթերցում արուեստասիրութեամբ¹⁴։ Սակայն նման միջամտությունը (եթե այն տպագրական վրիպակ չէ) Գրիգոր Նյուսացու ճառի գոնե այս հատվածի համար վերապահելի է։ Բացատրության այլ ուղի փնտրելն անիմաստ է, որովհետև բառիս կիրառության ուրիշ օրինակ, դատելով համաբարբառային գրականության առկա հրատարակություններից, ավանդված չէ։ Արուեստասիրութեամբ ընթերցումը բնագրի $\phi\iota\lambda\omicron\sigma\tau\epsilon\gamma\chi\eta\mu\alpha$ բառը թարգմանելու ճանապարհով է առաջացել (նշանակում է՝ արվեստավոր կառույց, նաև՝ արվեստի գործ)։ Համապատասխանության այս փաստից բացի՝ արուեստասիրութեամբ բառի գոյությունը պիտի արձանագրել նաև այն պատճառով, որ այդ նույն հատվածում Գրիգոր Նյուսացին պատմում է Թեոդորոսի սխրանալու (= սքանչանալ, հրաշանալ, հիանալ) կերպագրությամբ ժողովում խոսելու նրա կարողության մասին, որը և հայերենի թարգմանչին հնարավորություն է տվել հունարենի նմանությամբ ստեղծելու արուեստասիրութիւն բառը։

գ) «Քանզի իբրեւ նստաւ չարաբաստն այն ի չար դատարանն՝ դատաւորն եւ դատապետն ի միասին գովով...»¹⁵ նախադասությունը թարգմանությունն է հունարեն հետևյալ հատվածի. $\alpha\upsilon$ $\theta\alpha\lambda\iota\mu\omicron\nu$ $\chi\alpha\tau\omicron\nu$ $\pi\omicron\nu\gamma\tau\omicron\sigma\omicron\nu$ $\delta\iota\chi\alpha\sigma\tau\eta\sigma\iota\omicron\nu$ $\kappa\alpha\iota$ $\eta\gamma\gamma\epsilon\mu\omicron\nu$ $\kappa\alpha\iota$ $\tau\alpha\lambda\epsilon\tau\tau\eta\omicron\varsigma$ $\epsilon\iota\varsigma$ $\tau\omicron\iota\kappa\tau\omicron$ $\sigma\upsilon\nu\epsilon\theta\acute{\iota}\nu\tau\epsilon\varsigma$ ¹⁶։ Բնագիր-թարգմանություն համադրությունից պարզվում է, որ դատապետ-ը հունարեն $\tau\alpha\lambda\epsilon\tau\tau\eta\omicron\varsigma$ -ի նմանությամբ

⁹ Sermones, p. 63₂₁.

⁷ Sermones, p. 63₇.

⁹ Sermones, p. 63₁₀.

⁹ Sermones, p. 64₁₈.

¹⁰ ՁԼԼ. № 6196, էջ 313 բ.

¹¹ Sermones, p. 68₃₋₄.

¹² ՁԼԼ. № 6196, էջ 312 բ.

¹³ Sermones, p. 63₁₅.

¹⁴ ՏԼՄ ՆՀԲ, Բ, 718.

¹⁵ ՁԼԼ. № 6196, էջ 313 ա.

¹⁶ Sermones, p. 65₁₅₋₁₆.

կազմի մեջ բառ է (таксиарх, командир)¹⁷։ Հայերենի թարգմանիչը բնագրի հետևություններն ունի հրամանատար, վեցակցու ոչ սովորական իմաստներն է տեսնում դատապետ բառի սույն կիրառության մեջ։

Գրիգոր Նյուսացու սույն ճառի հայերեն թարգմանությունում կան մեկ տասնյակից ավելի բառեր, որոնք առաջացել են հունարեն նախորինակը պատճենելու, վերջինիս իմաստը հայերենի փոխանցելու եղանակով։ Այդ բառերի բացատրության միակ աղբյուրը, դատելով ՆՀԲ-ի հղումներից, մընում է «Ի յիշատակի սրբոյն Թէոդորոսի...» ճառի թարգմանությունը¹⁸։ Ստորև ներկայացնում ենք այդ կարգի մի խումբ բառեր իրենց հունարեն համապատասխան օրինակներով.

ամբոխարեր (էջ 314ր) — ἄσπετος (էջ 70.)
 անյանգապէս¹⁹ (էջ 314բ) — ἀληκτον (էջ 70.)
 արաւրագիր (էջ 311բ) — ἀροτριφ (էջ 61₁₀)
 բազմափափագ (էջ 312բ) — πολυπρόθυτος (էջ 63₂₁)
 բոցասնոց (էջ 312ա) — φλογόδοτος (էջ 64₇)
 թուլակի (էջ 313ա) — ὀλιότις (էջ 64₁₄)
 լեզուազգեսաց (էջ 312ա) — γλωσσόδοτος (էջ 63₁₀)
 մարմնավաճառ (էջ 314ա) — κρεωπώτης (էջ 69₂)
 նորակարգ (էջ 312բ) — νεόλαος (էջ 64₁₈)
 տարափաստութիւն (էջ 314ա) — ἀσέβεια (էջ 68.)
 աղայտեսակ (էջ 313բ) — ὑψιπότης (էջ 69₂)
 քաջահանդէպ (էջ 313ա) — ἐνδογύος (էջ 66₁):

Հայերենի թարգմանիչը հունարեն այս բառերի բուն իմաստին, հիմնական նշանակություններին հետամուտ լինելու պարագայում շատ դեպքերում, թերևս, կատեղծեր կամ կնիքները դրանց առավել հասկանալի ու հայ մատենագրության մեջ վաղուց տարածում գտած համարժեքների բայց քանի որ նա հիմնականում առաջնորդվել է բառերի ու արտահայտությունների արտաքին կառուցվածքային, առաջին հայացքից հիմնական թվացող նշանակությամբ, ապա արդյունքում առաջացել են ոչ սովորական, նըշված եզակի կիրառությամբ ընթերցվող ու բացատրվող մի շարք բառեր։ Այսպես՝ հունարենում «εὐδογία»-ը նշանակում է մեծ նախապաշտ²⁰, ուստի թարգմանիչը պիտի նախընտրեր նախապաշտ, նամփալ գրաբարում հայտնի, կիրառության հնագույն օրինակներ ունեցող բառերից մեկը կամ մյուսը։ Մինչդեռ աչքի առաջ ունենալով հունարեն նախօրինակի ենթիմաստները, կազմել է ամբոխարեր բառը, որը այլուր, նախօրինակից անշատ իրավացիորեն կարող է արհեստական ու սարքավի թվալ։ Տվյալ պարագայում խոս-

¹⁷ Տե՛ս Древнереческо-русский словарь. Т. II, М., 1958, с. 1602 (այսուհետև՝ ДРС).

¹⁸ Անեղիակ, առասպելութիւն, աղիագութիւն, քաղկեցութիւն, բանապաշտ, բացազործել, գաղառս, կեղպագրութիւն, չարաբաստ, քաջապաշտ, քեղի և նման տասնյակ բառերի բացատրության ժամանակ ՆՀԲ-ի օրինակներից մեկը, հաճախ առավել հինը, քաղվել է Գրիգոր Նյուսացու սույն ճառից։

¹⁹ № 6196 զրչադրում պահպանվել է գրեթե նույնիմաստ անյանգապէս ընթերցումը, որը բառարանագիրները վերընթերցում են անյանգապէս և իբրև բացատրության օրինակ մասնակի միջամտություններով վկայակոչում այս նույն հատվածը։ Առաջադրված տարբերակի օգտին է խոսում նաև բնագիրը (ἀληκτον = անդալար, անդու)։ Տեքստի անգրալ (— անաւարտ, անեզր, անվախճան, անսպառ, անբաւ) հարադիրը ևս հուշում է, որ անյանգապէս-ը առավել ճիշտ է արտադրում հեղինակի ասելիքը։

²⁰ ДРС, I, 1023.

ըը Թեոդորոսի հիշատակը հավերժացնող «զմրջեանցն բերելով զնմանութիւն»²¹ ամբողջի անվերջ հոսքի մասին է:

Վերոբերյալ ցանկում մարմնավաճառ բառի միակ վկայությունը տվյալ կիրառության օրինակն է: Հիմքը այս դեպքում հունարեն *καρπολογία* բառն է: Հայերենի թարգմանիչը ինչ-ինչ պատճառով, վերանալով բառիս ավանդված մտավաճառ, մագործ²² իմաստներից, այն վերարտադրել է մարմնավաճառ նյութական նշանակությամբ: Պիտի նկատել, որ մագործ, մագործ բառերի և դրանցով կազմված բարդությունների կիրառության օրինակներ կան մեր միջնադարյան մատենագրական հուշարձաններում և ցանկության դեպքում Գրիգոր Նյուսացու թարգմանիչը կարող էր դիմել դրանց օգնությանը:

Նույնպիսի բացատրությամբ պիտի օժտել նաև տղայտեսակի կիրառության մեր ունեցած վկայությունը: Հունարեն *νεανίσκος* հիմքը նշանակում է դեռատի, մանկամարդ²³: Հուհեանին համարժեք մանուկ, մանչ, աղա բառերի ոչ քիչ թվով հին օրինակներ կան ավանդված, որոնց հազիվ թե անհաղորդ լինեն Գրիգոր Նյուսացու ճառի թարգմանիչը: Այդուհանդերձ առաջադրվել է տղայտեսակ սեփական ընթերցումը, որը շուտի կիրառության այլուր պահանջված որևէ տարրերակ:

Անհրաժեշտության դեպքում հնարավոր է համապատասխան մեկնաբանությամբ օժտել վերոբերյալ և համաբնույթ բառերից յուրաքանչյուրը: Սակայն դրա հարկը չկա, որովհետև առաջադրված բացատրությունները բավարար պատկերացում կարող են տալ թարգմանչի բառընտրության և առհասարակ արժարժիող երևույթի մասին:

Առաջադրված ցանկը և դրանից դուրս մնացած ոչ քիչ թվով համաբնույթ բառ-ընթերցումների առկայությունը «Ի յիշատակի սրբոյն Թէոդորոսի...» ճառի քննվող թարգմանությունում հնարավորություն են տալիս մտածելու, որ թարգմանիչը որոշակի ծրագրի շրջանակներում իրացնում է շատ ավելի դժվար խնդիր. նա հունարեն նախօրինակի հենքի վրա, հունարենի բառակազմական սկզբունքներին հետևելով ստեղծում է նկարագրական թարգմանություն-տարբերակ: Գիտական գրականության մեջ նման թարգմանությունները ժամանակին որակվել են նյութական տեղմանով: Բնավ խուսափելով սույն գրական երկի հայերեն թարգմանությունը նյութական կոչված թարգմանությունների հետ (տարբերակիչ գծերը բավական շատ են), պարզապես պիտի արձանագրել, որ այս և նյութական հոշակված թարգմանությունների միջև կան որոշակի ընդհանրական եզրեր:

«Ի յիշատակի սրբոյն Թէոդորոսի...» ճառի հայերեն թարգմանության բնույթի, լեզվի ու ոճի մասին մեր պատկերացումները հնարավորին չափ ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև նրանում պահանջված դարձվածներին ու բառակապակցություններին: Համեմատությունը ցույց է տալիս, որ թարգմանության առումով որոշակի դժվարություններ ունեցող այդ ոճական միավորները ևս առաջացել են հունարենի հենքի վրա՝ նախօրինակի իմաստային ձևերն ու գեղարվեստական արտահայտչամիջոցները պահպանելու որոշակի միտումով: Այդ բառակապակցություններն առաջին ընթերցմամբ ոչ միայն անսովոր են ու անբարեհունչ, այլև խորթ ու անհարազատ են թվում հին հայերենի բառ ու բանի շրջանակում: Ստորև ներկայացնում ենք այդ արտահայտություններից մի քանիսը, որոնք միաժամանակ կարող են պատկերացում տալ հեղինակի ոճական ընկալումների, պատկերավոր արտահայտությունների ու մակդիր-համեմատությունների նշանակով կերպավորման ունեցած փորձի մասին:

21 Ձեռ. № 6196, էջ 314 ր.

22 ՏԵՍԴՍԻ, I, 981.

23 ՏԵՍԴՍԻ, I, 1133.

աներևելի բարեկամ (էջ 314բ) — ἀσφατος φίλος (էջ 70₁₁₋₁₂)
 անդարհորի կամաւք (էջ 313ա) — ἀκαταπαύτως τῇ γυναικί (էջ 68₄)
 անհմտ մարտ (էջ 313ա) — ἀπειρος πολέμου (էջ 65₁₂)
 առասպելեալ մաւր (էջ 313բ) — μαθευμένη μνηστὶς (էջ 67₁₂)
 դատապարտող դատակնիք (էջ 314բ) — κατακρίνουσα ψήφος (էջ 69₁₈)
 զբարբարոսական մրրիկն (էջ 311բ) — τὴν βερβαρικὴν ζήτησιν (էջ 61₁₆)
 զբոցասնոյցն... զհնոցն (էջ 312ա) — φ' ογοτρύειν... καινον (էջ 63₇₋₈)
 զհանդերձն շաղախելով (էջ 314ա) — ἐπὶ τῇ πολλοῦ μέντοι (էջ 69₂)
 զմթացեալ ծիրանին (էջ 314ա) — οὐχ οὐδὲν πρὸς τὸν (էջ 68₂₁)
 զտանջողական փայլից (էջ 314ա) — βλαστητῆρος ξύλου (էջ 69₆)
 իդակուն աստուածութի խոստովանելով (էջ 313բ) — θ' εἰς ὁμοίαν
 θεόν (էջ 69₂₂)
 իշխանական վստահութիւնս (էջ 313բ) — ἀρχόντος θάλασσης (էջ 67₂₇)
 հեղգային տարակուսելով (էջ 313ա) — ἐπεὶ τὸν ἡπορήμενον (էջ 66₁₀)
 մակերեւութեանն հանգստի (էջ 312բ) — τῇ ἐπιφανείᾳ τῆς ἀναπαύσεως
 (էջ 63₁₈)
 լանձնառական աւթեւան (էջ 314բ) — ἀνεκτὸν καταγύγιον (էջ 70₁)
 լատկս գեանոցս (էջ 312բ) — πατούμενον ἑορτασ (էջ 63₁₁)
 լարիական ճակատամարտութեանն (էջ 313բ) — ἀνὰ τὴν πρᾶξιν (էջ 67₁₀)
 սպառազինական ընտրութիւն (էջ 313ա) — ὁπλιτευοὺς καταλόγους (էջ 65₄)
 ստորանկեալ զոգովեամբ (էջ 313ա) — πρὸς τὸν κατὰ τὸ ὄνομα
 (էջ 66₁₋₂)
 տարեւորական տաւնիք (էջ 314բ) — ἐναυαγιστοὺς ἑορταίς (էջ 70₂)
 ցաւքն հրոյն (էջ 314բ) — πύρος ἀιγυθόνι (էջ 70₁₇₋₁₈)

Թարգմանչի հիմնական հոգացողութիւնը եղել է հնարավորութեան սահմաններում ճշգրիտ՝ բառը-բառի, կապակցութիւնը-կապակցութեան տեսքով հայերենի փոխանցել բնագիրը, չհամահարթել հեղինակի ոճը՝ հարազատ մնալով բնագրի անգամ առանձին տարած զրեւորումների նկատմամբ։ Բնագրի առանձին այլաոճ զրկագները ոչ միայն չեն համահարթվել, այլև նույն երանգով ու բնագրային ոչ միօրինակութեամբ փոխանցվել են հայերենի։ Իբրև ասվածի վկայութիւն կարելի է հիշատակել տողատվելու, չափածոյի վերածվելու հնարավորութեամբ օժտված հունարենի այն հատվածները, որոնք նույն հաջողութեամբ տողատվում, հանգավորվում են նաև հայերեն տեքստում։ Այսպես, օրինակ, խոսելով Թեոդորոսի «ի գեղեցիկ եւ յերանելի առ Աստուած» ճանապարհովելու մասին, Գրիգոր Նյուսացին անդրադառնում է նաև հանգուցյալի թողած հիշատակի խնդրին, որը, եթե փորձենք տողատել, կունենա հետևյալ տեսքը.

զիշատակ շանի մրցանացն
 եթող ի վարդապետութիւն՝
 ժողովորդք հաւաքելով,
 զեկեղեցիս խրատելով,
 զհրշտակ խաղաղութեան կոչելով,
 առ մեզ հայցելով
 յԱստուծոյ զպատշաճն եւ զաղոտն²⁴,

²⁴ 264. № 6196, էջ 314բ (հմտ. Sermones, p. 69₂₁₋₂₂).

Թարգմանիչը ճիշտ նույն հետևողականությամբ, գրեթե առանց բառ տեղաշարժելու, հայերենի է փոխանցում հունարեն նախօրինակի բոլոր բանաձևային ձևակերպումներն ու թեմատիկ արտահայտությունները: Ահա դրանցից մի քանիսը իրենց հունարեն համապատասխանություններով:

ա) Թարգմ. «Ի փոքրագույնիցն զմեծամեծսն ուսիր, ի ստուերիցս զնախատիպն իմաստի»²⁵:

Բնագիր. «ἐκ τῶν μικρῶν τὴν μεγάλαν κατὰ μίαν ἐκ τῶν μεγάλων τὴν ἀρχαίαν»²⁶.

բ) Թարգմ. «Սիրելի է իւրաքանչիւրն յատուկն»²⁷:

Բնագիր. «τὸν γὰρ ἐκάστῳ τὸ ἴδιον»²⁸:

Թարգմ. «Զի բարի է ինձ ի տան Աստուծոյ յանկեալ լինել առաւել քան զբնակել ի յարկս մեղաւորաց...»²⁹:

Բնագիր. «Παράρρητικ-εἶσθαι γὰρ ἐν τῷ οἴκῳ τοῦ θεοῦ μᾶλλον ἢ οἰκεῖν ἐν ἀκαθάρτοις ἀμαρτωλῶν»³⁰:

Գրիգոր Նյուսացու քննվող ճառի պահպանված հայերեն թարգմանության և բնագրի համեմատությունը հնարավորություն է տալիս արժարժեքի նաև բնագիր-թարգմանության մասնակի անհամապատասխանության առանձին դեպքեր³¹, մեկ-երկու պարագայում նաև հայերեն թարգմանության մեջ բառական ոչ ճիշտ ընթերցման, աղավաղման օրինակներ:

Քահանայապետության արժանավորության հարցին անդրադառնալիս Թեոդորոսի պատասխանն խոսքում կարդում ենք. «Զի որ առ վատթարագոյնն մեծն է եւ առաջին կարգեալ նա եղկելի եւ թշուառական՝ որպէս առ իրաւսն անիրաւագոյնն եւ առ սպանողսն մանաւանդ կարծրագոյնն»³², Դրժվար չէ կռահել, որ ընդգծված արտահայտության մասում խաթարվածության հետք կա. առ իրաւսն անիրաւագոյնն կապակցության դիմաց հունարենում առկա է τῶν ἀδικῶν ὁ ἀδικώτερος³³, ուր անհամապատասխանությունը հունարեն ἀδικῶν (= անիրավ³⁴) բառի դիմաց առ իրաւսն ընթերցմամբ է, որը հունարենի նմանությամբ պիտի վերընթերցել անիրաւսն:

Այսպիսով, Գրիգոր Նյուսացու «Ի յիշատակի սրբոյն Թեոդորոսի...» դամբանական ճառի թարգմանության վերոբերյալ քննությունը հնարավորություն է տալիս կատարելու որոշ եզրակացություններ:

ա) Թեոդորոսին նվիրված սույն երկը նյութով ու բովանդակությամբ, կառուցվածքով ու ժանրով համապատասխանում է ներբողի այն տեսակին, որը կոչվում է դամբանական ճառ (կառուցվածքային և սյուժետային մասնակի շեղումները հասկանալի են և հատուկ քննության նյութ չեն կարող դառնալ): Ի տարբերություն նույն հեղինակի նույնաբնույթ «Ի Մելիտոս

²⁵ Նույն տեղում, էջ 312 ր:

²⁶ Sermones, p. 64₁₃₋₁₄:

²⁷ Ձեռ. № 6196, էջ 312 ր:

²⁸ Sermones, p. 64₂₁₋₂₂:

²⁹ Ձեռ. № 6196, էջ 314 ա:

³⁰ Sermones, p. 68₁₇₋₁₈:

³¹ Այսպես, օրինակ, իբրև թարգմանության և բնագրի ոչ լիարժեք համապատասխանության օրինակ կարելի է վկայակոչել «Այլ նա հաստատուն գիմաւք...» (էջ 313 ա) պարբերության երկրորդ կեսը (հմտ. Sermones, P. 66₈₋₁₅): Կան այլ բնույթի անհամապատասխանության նշմարներ ևս:

³² Ձեռ. № 6196, էջ 314 ա:

³³ Sermones, p. 68₁₃₋₁₂:

³⁴ ДРС, I, 35.

եպրսկոպոս...» երկի, սույն աշխատանքը թե՛ բնագրում և թե՛ հայերեն թարգմանությունում պահպանել է ներքոյն անվանումը:

բ) «Ի յիշատակի սրբոյն Թէոդորոսի...» ճառի հայերեն թարգմանության լեզուն ընդհանուր առմամբ հունարան հայերենն է: Կան բաղձաթիվ բառեր, արտահայտություններ ու ոճական միավորներ, որոնք հասկանալի ու բացատրելի են դստնում հիմնականում հունարեն նախօրինակների համադրության պայմաններում: Բառերի ու արտահայտությունների այդ խումբը էական մասով անձանոթ է ՆՀԲ-ին (ե առհասարակ այլ բառարանագրությանը), իսկ եթե ծանոթ է, ապա միայն սույն հուշարձանի հայերեն թարգմանությամբ:

գ) Նյութական կոչվող թարգմանության տպավորությունն թողնող այս հուշարձանի լեզվաոճական ինքնատիպ վիճակը մասամբ էլ պայմանավորված է բնագրի, բուն նյութի պատմափիլիսոփայական ատաղձով, հեղինակային բառազանձի բարդությամբ:

դ) Բնագրին հաջադատ մնալու թարգմանչի հետեռդանությունը պահպանվել է ամենուր: Այդ իսկ պաաճառով հունարենում եղած որոշ տարածության հեղինակային երանգները նույնությամբ կան նաեւ հայերեն թարգմանության տեքստում. չափածոյի հնարավորությամբ օժտված հստկածները, բանաձեւային ձեւակերպումները, թեւովոր արտահայտություններն ու մակդիրավոր կապակցությունները գրեթե նույնությամբ պահպանվել են նաեւ հայերեն օրինակում:

ե) Բնագիր-թարգմանության անհամապատասխանության եղսւթ ոճական-շարահյուսական անհարթությունները, ինչպես նաեւ մեկ-երկու բառական խաթարվածության օրինակները ոչ թե գրչական միջամատության, այլ սովորական վրիպման արդյունք են և որեէ առնչություն չունեն բուն թարգմանության հետ:

ДРЕВНЕАРМЯНСКИЙ ПЕРЕВОД РЕЧИ ГРИГОРИЯ НИССКОГО «К ПАМЯТИ СВ. ФЕОДОРА...»

Доктор филол. наук **К. М. МУРАДЯН**

Резюме

Исследование армянского перевода речи «К памяти св. Феодора...» сохранившегося в рукописи Матенадарана № 6196 (311v—315r) показывает, что в нем имеются слова и словосочетания, не фиксируемые в литературе периода ее возникновения. Некоторые словосочетания, представляя собой буквальный перевод соответствующих сочетаний греческого текста, сохранили формы и средства художественной выразительности оригинала.